



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

«24» մայիսի 2007թ.

N 27-Հ

ք.Ստեփանակերտ

Չրահանգները հաստատելու մասին

Ղեկավարվելով «Սերմերի մասին» ԼՂՀ օրենքի 7-րդ հոդվածի դրույթներով ու «Սերմերի հավաստագրման կարգը հաստատելու մասին» ԼՂՀ կառավարության 2006թ. օգոստոսի 29-ի թիվ 438 որոշման 34-րդ հոդվածի դրույթներով և ի կատարումն ԼՂՀ կառավարության 2007թ. փետրվարի 27-ի թիվ 88 որոշման 2-րդ կետի «բ» ենթակետի հրամայում են.

Հաստատել՝

1. Գյուղատնտեսական մշակաբույսերի սերմնադաշտերի դաշտային հետազոտման (ապրոբացիայի) հրահանգը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:
2. Աշնանացան և գարնանացան ցորենի ու գարու դաշտային հետազոտման (ապրոբացիայի) հրահանգը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:
3. Եգիպտացորենի սերմնադաշտերի դաշտային հետազոտություններ (ապրոբացիայի) հրահանգը՝ համաձայն թիվ 3 հավելվածի:

ՆԱԽԱՐԱՐ

Վ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Հրահանգ

Գյուղատնտեսական մշակաբույսերի սերմնադաշտերի դաշտային հետազոտման (ապրոբացիա) Ընդհանուր դրույթներ

Սերմնադաշտերի դաշտային հետազոտությունների (ապրոբացիա) հիմնական նպատակն է ցանքերից ստացված բերքի որպես սերմնանյութ (տնկանյութ) օգտագործման համար պիտանիության աստիճանի որոշումը:

Դաշտային հետազոտման ենթակա են գյուղատնտեսական մշակաբույսերի օգտագործման թույլտվություն ունեցող բույսերի սորտերի ցանկում գրանցված սորտերի սերմնադաշտերը: Բույսերի օգտագործման թույլտվություն ունեցող սորտերի ցանկում չգրանցված սորտերի սերմնադաշտերը չեն կարող ենթարկվել դաշտային հետազոտությունների, բացառությամբ այն դեպքերի, երբ ԼՂՀ կառավարությունը թույլատրում է ԼՂՀ տարածքում շուկա հանել (իրացնել) նշված ցանկում չգրանցված սորտերի սերմերը:

Սերմնադաշտերի դաշտային հետազոտությունները (ապրոբացիա) կատարվում է համաձայն մշակաբույսերի սերմնաբուծության հերթագայության (սխեմայի):

Բաժին I. Սերմնադաշտերի ապրոբացիայի համար անհրաժեշտ աշխատանքների կազմակերպումը

1.1. Գյուղատնտեսական մշակաբույսերի սերմնադաշտերը, որոնց սերմերը նախատեսված են իրացման, ենթակա են պարտադիր ապրոբացիայի: Այն սերմնադաշտերը, որոնց սերմերը նախատեսված են սերմարտադրողների սեփական կարիքների համար, կարող են ըստ ցանկության ենթարկվեն ապրոբացիայի:

1.2. Սերմնադաշտերի դաշտային հետազոտությունները (ապրոբացիա) իրականացնում են հավատարմագրված ապրոբատորները: Փորձանմուշների ու խրճերի ընտրությունը և բույսերի զննումը արմատի վրա ապրոբատորը անց է կացնում սերմարտադրողի կամ նրա ներկայացուցիչի ներկայությամբ:

1.3 Սերմարտադրողը սերմնադաշտերի դաշտային հետազոտությունների (ապրոբացիա) կատարման համար ներկայացնում է հայտ համաձայն ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության 2007թ. մարտի 28-ի թիվ 17-Կ հրամանով սահմանված կարգի:

1.4. Սերմարտադրողը պարտավոր է դաշտային հետազոտությունների (ապրոբացիա) ընթացքում տեխնիկական աշխատանքների կատարման համար հատկացնել ապրոբատորին բանվորներ և ապահովել տրանսպորտային միջոցով:

1.5. Հավաստագրող մարմինը ուսումնասիրում է սերմարտադրողի հայտը, նշանակում է համապատասխան ապրոբատոր՝ տրամադրելով նրան տեղեկություններ գրանցված սերմերի (Ձև 4), և ստուգիչ հողամասում կատարված փորձարկումների արդյունքների մասին (սորտային մաքրություն, հիվանդությունների և վնասատուների վարակվածություն):

1.6. Սերմնադաշտերի դաշտային հետազոտությունների ընթացքում իրականացվում են

- դաշտային ուսումնասիրություն
- փորձանմուշների և խրձերի առանձնացում և դրանց հետազոտություն:
- փաստաթղթերի կազմում և ներկայացում հավաստագրման մարմին

1.7. Ապրոբատորը պատասխանատվություն է կրում սերմնադաշտերի գրանցման, ճիշտ ու ժամանակին հետազոտության, փորձանմուշների (խրձերի) ճիշտ ընտրության և անալիզի ենթարկելու, ինչպես նաև փաստաթղթերի հավաստի ձևակերպման համար:

1.8. Սերմարտադրողը պարտավոր է կատարել ապրոբատորի առաջարկությունները, որոնք նպաստում են պահպանելու և բարելավելու ապրոբացվող ցանքի սորտային որակը և երաշխավորում է այդ որակների պահպանումը՝ բերքահավաքից մինչև սերմերի իրացումը:

1.9. Դաշտային և փորձանմուշների ու խրձերի հետազոտման արդյունքների վերաբերյալ կազմվում է համապատասխան փաստաթղթերի փաթեթ և ներկայացվում հավաստագրման մարմին քննարկման և հաստատման:

Բաժին II. Ապրոբացիոն փորձանմուշների (խրձերի) ընտրությունը և առանձնացումը.

2.1. Սերմնադաշտերի սորտային պիտանիության որոշման համար դաշտից վերցվում են փորձանմուշներ և խրձեր: Վերջիններս վերցվում են դաշտի անկյունագծերով՝ առանց հատուկ ընտրության:

2.2. Նմուշները պետք է վերցնել հետազոտվող մշակաբույսերի հասունացման այն փուլում, որով կարելի է որոշել սորտային հատկանիշները:

2.3. Յուրաքանչյուր մշակաբույսի համար սահմանված փորձանմուշների վերցնելու բույսի զարգացման փուլերը, ստուգիչ տարածության չափը, մեկ նմուշի մեջ բույսերի (ցողունների) անհրաժեշտ քանակը և մեկուսացվող տարածության նորմերը բերվում են ստորև աղյուսակի ձևով.

Ցուցմունքներ

հացահատիկային մշակաբույսերի ապրոբացման ժամանակ

խրձերի ընտրման և բույսերի զննման վերաբերյալ

Մշակաբույս	Բույսերի զարգացման փուլը ապրոբացիայի ժամանակ	Բույսերի զննման կամ խուրձի ընտրման սահմանված տարածքը (հա)	Բույսերի զննման կամ խրձերի վերցման կետերի թիվը	Ամբողջ տարածքից զննվող կամ ընտրվող խրձի մեջ ցողունների թիվը (ոչ պակաս)	Մեկուսացվող տարածության նորմերը (մետր)
Աշնանացան և գարնա-նացան ցորեն, աշնա-նացան և գարնանացան գարի, վարսակ	մոմային փուլի սկզբում	30.0	45-50	750	*
Եգիպտացորեն	մոմային կամ լրիվ հասունացման փուլում	50	25	10 **	200-300

* կարծր ցորենի սերմնային ցանքերը պետք է տեղադրվեն փափուկ ցորենի ցանքերից ոչ պակաս 150 մետր հեռավորության վրա:

** կողրերի քանակը:

2.4. Եթե մեկ սորտի սերմնադաշտերի ընդհանուր մակերեսը գերազանցում է սահմանված չափերին, այդ դեպքում դաշտը բաժանվում է երկու կամ ավելի մասերի և առանձնացված յուրաքանչյուր ցանքատեղամասից վերցվում են համապատասխան քանակի փորձանմուշներ և խրձեր, որոնց համար ձևակերպվում են առանձին փաստաթուղթ:

2.5. Բոլոր փորձանմուշները պիտակավորվում և ենթարկվում են հետազոտման (անալիզի) ապրոբատորի կողմից:

2.6. Փորձանմուշների ընտրությանը և առանձնացմանը զուգահեռ ապրոբատորը աչքաչափով որոշում է ցանքսում հանդիպող կարանտին մոլախոտերի անվանումը և առկայությունը, ինչպես նաև ցանքի աղտոտվածության աստիճանը ըստ սանդղակի:

0- աղտոտվածությունը լրիվ բացակայում է

1- աննշան աղտոտվածություն

2- միջին աղտոտվածություն

3- ուժեղ աղտոտվածություն

Սահմանված մեթոդով որոշում է ակնկալվող բերքը մեկ հեկտարից

Բաժին III. Ապրոբացիոն փորձանմուշների և խրձերի անալիզ

3.1. Փորձանմուշների և խրձերի անալիզները պետք է կատարել վերցնելուց հետո 3 օրվա ընթացքում

3.2. Անալիզների արդյունքներով ապրոբատորը որոշում է նմուշի սորտային պատկանելիությունը, տիպիկությունը, սորտային մաքրությունը, դժվար անջատվող մշակաբույսերի և մոլախոտերի, թունավոր, չարորակ և կարանտին մոլախոտերի առկայությունը վարակվածությունը հիվանդություններով և վնասվածությունը՝ վնասատուներով:

3.3. Ցանքերի սորտային մաքրությունը որոշելու ժամանակ ապրոբատորը պետք է հաշվի առնի տվյալ սորտի մորֆոլոգիական հատկանիշներն ու փոփոխությունները, արտաքին տեսքը և սորտի յուրահատկությունը:

3.4. Խրձերի անալիզի ընթացքում առանձնացված յուրաքննաչյուր խմբաքանակ (ֆրակցիա) պիտակավորվում և դրվում է պահպանության (6-12 ամիս):

3.5. Ապրոբատորի ներկայացրած տվյալները ենթակա են փոփոխման կամ խոտանման եթե դրանց ճշտությունը չի հաստատված հավաստագրման մարմնի կողմից:

Բաժին IV. Սերմնադաշտերի դաշտային հետազոտությունների վարձատրությունը

4.1. Սերմնադաշտերի դաշտային հետազոտությունների (ապրոբացիա) վարձատրությունը կատարում է սերմարտադրողը հայտ ներկայացման պահին՝ սերմարտադրողի և հավաստագրման մարմնի միջև կնքված պայմանագրի հիման վրա:

Բաժին V. Ապրոբացիոն փաստաթղթերի փաթեթի կազմումը

5.1 Փաթեթն իր մեջ ընդգրկում է.

ա) հայտ սերմնադաշտերի դաշտային հետազոտությունների (ապրոբացիայի) կատարման մասին (Ձև 1)

բ) վարձատրության անդորրագիր

գ) ապրոբացիոն ակտ (Ձև 2)

դ) խոտանման ակտ (Ձև 3)

ե) սերմնադաշտերի դաշտային հետազոտության մասին հաշվետվություն ձև N 4 (Ձև 4)

զ) ստուգիչ հողամասում կատարված փորձարկումների արդյունքների հաշվետվություն (Ձև 5)

է) ապրոբացված սերմնադաշտի բերքի կուտակման մասին ծանուցում (Ձև 6):

5.2 Հավաստագրման մարմինը սերմնադաշտերի դաշտային հետազոտությունների ավարտից հետո ուսումնասիրում է հետազոտությունների մասին հաշվետվությունները և 5 օրվա ընթացքում սերմարտադրողին տեղեկացնում է կատարված ապրոբացիայի արդյունքների մասին:

5.3. Սերմարտադրողը ապրոբացված սերմնադաշտից ստացված բերքը պահեստավորում է այլ սերմերից առանձին և սեփական պիտակներով պիտակավորում:

Պիտակը տեղադրվում է տեսանելի տեղում և նրա վրա նշում են մշակաբույսը, սորտը, սերմարտադրողի անունը (անվանումը) և սերմնադաշտը:

5.4. Սերմարտադրողը բերքի տեղափոխման և վերամշակման ժամանակ երաշխավորում է սերմերի սորտային պատկանելիությունը և մաքրությունը :

5.5. Սերմարտադրողը հավաստագրման մարմին է ներկայացնում ծանուցում բերքի կուտակման մասին (հավելված 6)

5.6 Ապրոբացման կամ խոտանման ակտերը կազմում են 3 օրինակից, որից մեկը տրվում է ապրոբատորին, երկրորդը՝ սերմարտադրողին, իսկ երրորդը՝ մնում է հավաստագրման մարմնում և ենթակա են 3 տարվա պարտադիր պահպանության:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏ

ՍԵՐՄՆԱԴԱՇՏԵՐԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏՁՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ԱՊՐՈԲԱՑԻԱՅԻ) ԿԱՏԱՐՄԱՆ
ՄԱՍԻՆ

Հայտի համար

--	--	--	--	--	--	--	--	--	--

Հայտի ներկայացման (գրանցման) ժամկետը

« _____ » _____ 200_թ.

Հայտատու

(անուն, ազգանունը, բնակության վայրը կամ իրավաբանական անձի լրիվ անվանումը, գտնվելու վայրը)

Ապրոբացիայի է ներկայացվում

Մշակաբույսը	Սորտը	Դասը	Նախորդը	Տարածքը (հեկտար)

Ցանքատարածությունները գտնվում

են՝ _____

Խնդրում եմ կատարել նշված սերմնադաշտերի դաշտային հետազոտություններ
(ապրոբացիա):

Հայտատու՝ _____
(ստորագրություն)

_____ (անուն, ազգանուն)

« _____ » _____ 200_թ.

Կ.Տ

Ցանքը ճանաչված է _____

(վերարտադրություն, սերունդ, կատեգորիա)

_____ (ապրոբատորի ստորագրությունը)

_____ 200_թ.

ԱՊՐՈԲԱՑԻՈՆ ԱԿՏ Թ. _____

հացահատիկային, հատիկաընդեղեն մշակաբույսերի և եգիպտացորենի

Ես ապրոբատոր _____

_____ (անուն, ազգանուն, վկայագրի համարը)

200 _____ թվականի _____-ին

սերմարտադրողի (սերմարտադրողի ներկայացուցիչ) _____

_____ (անուն, ազգանուն, հայտի N և ամսաթիվը)

ներկայությամբ կատարեցի _____ ցանքսի

(մշակաբույս)

ապրոբացիան արմատի վրա

ԱՊՐՈԲԱՑԻՈՆ ՏՎՅԱԼՆԵՐՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ Է

1. Սորտի անվանումը _____

(օրիգինատորի անվանումը)

և բուսաբանական այլատեսակը _____

2. Ցանքի տեղը _____

(չրջան, համայնք, վարձակալման կամ սեփականաշնորհման վկայականի համարը, ամսաթիվը)

Ապրոբացվոց ցանքի տարածքը _____ հեկտար _____

Ինչ սերմերով է կատարված ցանքը _____
(իր, թե ստացված, եթե սերմերը ստացված են, նշել ֆիզիկական կամ

իրավաբանական անձը)

Ցանված սերմերի սորտային և ցանքային որակը հաստատող հավաստագրերի անվանումը,

համարը և թիվը _____

Եթե ցանքը կատարված է սեփական բերքից ստացված սերմերով, նշել երբ և ումից են

ստացվել բազմացման համար այդ սերմերը _____

Ցանված սերմերի սորտային որակը, վերարտադրություն (սերունդ) _____ ,

կատեգորիա _____ , սորտային մաքրություն (տիպիկություն),

_____ , արևածաղկի վահանապատություն _____ ,

եգիպտացորենի խայտաբղետություն _____ հատիկ:

Սերմնաարտադրողը ունի արդյո՞ք, տվյալ մշակաբույսի ուրիշ սորտեր կամ պոպուլյացիա,

նրանց անվանումը և 200 _____ թ. նրանցով զբաղեցրած տարածքը:

Խաչաձև փոշոտվող մշակաբույսերի մեկուսացնող տարածության հեռավորությունը մյուս

սորտերից (միայն խաչաձև փոշոտվող մշակաբույսի համար) _____
(ապահովված է կամ չի ապահովված)

կազմում է _____ մետր

Ցանքի նախորդողներ (մշակաբույսեր, սորտեր և նրանցով զբաղեցրած տարածությունը)

Զարգացման ֆազան ապրոբացիայի ժամանակ _____

Ցանքի աղտոտվածությունը մոլախոտերով (ըստ սանդղակի) _____

Սպասվող բերքը մեկ հեկտարից _____ ցեմտներ:

14. Անալիզի արդյունքները

ա) Խրձի (նմուշի)

Խրձի (նմուշի) N	Հողամասի տարածությունը (հեկտար)	Հիմնական սորտ		Սորտային աղբտվածության կազմը						Ապրոբացվող կուլտուրայի չգարգացած ցողունների քանակը	Դժվար անջատվող կուլտ. բույսերի խառնուրդ									
		գարգացած ցողունների քանակը	%	անուրը և քանակը				ընդամենը			անուրը և քանակը		ընդամենը							
								ցողունների քանակը	%				քանակը	%						

Դժվար անջատ. մոլախոտ.աղբտվ.					Աղբտվածութ. կարանտին մոլախոտերով					Աղբոտ վնասակար թունավոր մոլախոտ			Գյուղատնտեսական բույսերի վարակվածությունը հիվանդութ. ու վնասվածությունը վնասատուներով							
անուրը և քանակը					անուրը և քանակը					անուրը և քանակը			անուրը և քանակը							
			ընդամենը										քանակը	%	քանակը	%	քանակը	%	քանակը	%
			քանակը	%																

բ) եգիպտացորենի հիմնական տիպի կողեր _____ հատ _____ %
 եգիպտացորենի այլ տիպի կողեր _____ հատ _____ %
 եգիպտացորենի 100 կողերի հատիկների խայտաբղետությունը հիմնական տիպի նկատմամբ _____ հատիկ
 գ) փափուկ ցորենի շառնուրդի առկայությունը կարծրի մեջ _____ %
 արևածաղկի վահանապատվությունը _____ %
 դ) ոլոռի վարակվածությունը պեյլուշկայով _____ %

15. Ապրոբատորի առաջարկությունները _____

16. Ստուգիչ խուրձը պահպանման համար հանձնված է սերմարտադրողի ներկայացուցիչ _____ (ԱԱՀ)

Ապրոբատոր _____ (ստորագրություն, ազգանուն)

Սերմարտադրող (սերմարտադրողի) _____
 ներկայացուցիչ _____ (ստորագրություն, ազգանուն)

ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐԱԳԻՐ

Սերմարտադրողը պարտավորվում է կատարել սույն ակտի 15-րդ կետում նշված լրացուցիչ միջոցառումները, որոնք նպաստում են պահպանելու և բարելավելու ապրոբացվող ցանքի սորտայնության որակը և երաշխավորում է այդ որակների պահպանումը բերքահավաքից մինչև սերմերի իրացումը: Սերմարտադրողը պարտավորվում է իրացման ժամանակ ուղեկցել սերմերի խմբաքանակը հավաստագրերով:

« _____ » _____ 200__թ.

Սերմարտադրող _____

NN	Դժվար անջատվող մշակելի բույսերի խառնուրդ			Դժվար անջատվող մոլախոտերով աղտոտվածությունը			Աղտոտվածությունը կարանտին մոլախոտերով
	անունը և քանակը	ընդամենը		անունը և քանակը	ընդամենը		
		քանակը	%	քանակը	քանակը	%	

Աղտոտվածության վնասակար թունավոր մոլախոտերով		Գյուղատնտեսական մշակաբույսերի վարակվածությունը հիվանդություններով, վնասվածությունը վնասատուներով և, հիվանդության ու վնասատուի անունները						
	արևադեմ, թավուտ							
քանակը	քանակը	քանակը	քանակը	%	քանակը	%	քանակը	%

բ)Սորտային մաքրությունը _____ %

գ)Վերարտադրությունը _____

դ)Եգիպտացորենի հիմնական սորտի կողրեր _____ հատ _____ %

Եգիպտացորենի այլ տիպի կողրեր _____ հատ _____ %

Եգիպտացորենի հիմնական տիպը 100 կողրի հատիկների խայտաբղետությունը (քսենանյութը) _____ հատ:

ե)Խաչաձև փոշոտողների տիպիկությունը _____ %

զ)Արևածաղկի վահանապատությունը _____ %

է)Ոլոռի աղբոտվածությունը պելլուլակյով _____ %:

5. Խոտանումը կատարված է հետևյալ պատճառով.

6. Ապրոբատորի առաջարկությունները _____

7. Ապրոբացիոն խուրճը պահպանման համար հանձնված է տնտեսվարող սուբյեկտի ներկայացուցիչ _____

(ազգանունը և պաշտոնը)

Ծանոթություն.- Խոտանված սերմնադաշտերի բերքը սորտային հացահատիկի հետ փոխանակելու համար պահել առանձին:

Ապրոբատոր _____
(ստորագրություն)

Տնտեսվարող սուբյեկտի ներկայացուցիչ _____
(ստորագրություն)

ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Տնտեսվարող սուբյեկտը պարտավորվում է կատարել սույն ակտի 6-րդ կետում նշված ապրոբատորի առաջադրանքները, խոտանված տարածությունից ստացած բերքը չխարնել սորտային հացահատիկի հետ , իսկ մթերման հանձնելիս հանձնել առանց «Սորտային վկայականի»

Տնտեսվարող սուբյեկտ _____
(ստորագրություն)

Ապրոբատոր _____
(ստորագրություն)

**ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱԴԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ «ՍԵՐՄՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵԼԵԿՑԻՈՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԲԸ
ՍԵՐՄՆԱԴԱՇՏԵՐԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (ԱՌԱՆՁԻՆ ՄՇԱԿԱԲՈՒՅՍԻ ՀԱՄԱՐ)**

Հայտատուի անունը (անվանումը)

Արտադրման ենթակա դասը

Մշակաբույսի նույնականացման թիվը

Սերմի խմբաքանակի թիվը

Տեսակը

Բերքահավաքի տարին

Սորտը

Հայտատուի հաշվառման թիվը

Էջի թիվը

N/N ը/կ	Աճեցնողի հասցեն (գտնվելու վայրը) և հեռախոսահամարը	Մշակաբույսի բնութագիրը	Նախորդ 6 տարվա բերքատվությունը	Ցանքատարածությունը (հեկտար)	Պաշտոնական օգտագործման համար
1.					
2.					
3.					
4.					
5.					

**Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսական նախարարության
«Սերմնաբուծության և սելեկցիոն նվաճումների պահպանության կենտրոն»
Ստուգիչ հողամասում կատարված փորձարկումների
արդյունքների հաշվետվություն**

Սերմարտադրող	Մշակաբույս	Սորտ	Ցանված սերմի դասը	Սորտային մաքրություն (%)	Հիվանդություններ			Կարանտին մոլախոտ

Հավաստագրման մարմնի պատասխանատու անձ _____
(ստորագրություն) (պաշտոնը, անուն, ազգանուն)

« _____ » _____ 200_թ.

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսական նախարարության
«Սերմնաբուծության և սելեկցիոն նվաճումների պահպանության կենտրոն»
Ապրոբացված սերմնադաշտերի բերքի կուտակման մասին ծանուցում

1. Սերմարտադրող _____
(անուն, ազգանուն կամ անվան հաշվառման թիվը)
2. Մշակաբույս _____
3. Դասը _____
4. Սորտը _____
5. Կուտակված բերքի ծավալը, կգ. _____
6. Կուտակված բերքի գտնվելու վայրը _____
7. Ապրոբացիոն ակտ`N _____ « _____ » _____ 200_թ.

Սերմարտադրող _____
(ստորագրություն)

Կ.Տ.

« _____ » _____ 200_թ.

Հրահանգ

Աշնանացան և գարնանացան ցորենի ու գարու դաշտային հետազոտման (ապրոբացիա)

1. Սերմնադաշտերի սորտային պիտանիության որոշման համար դաշտից վերցվում են փորձանմուշներ (խրձեր): Վերջիններս վերցվում են դաշտի անկյունագծերով առանց հատուկ ընտրության:

2. Սահմանված կարգով ցանքերից վերցված փորձանմուշները (խրձերը) անալիզի արդյունքներով բաժանվում են տարբեր ֆրակցիաների հետևյալ կարգով`

ա) հիմնական սորտի հասկակիր ցողունների քանակը,

բ) հիմնական սորտի թերաճ (հասկ չունեցող) ցողունների քանակը,

գ) այլ սորտերի հասկակիր ցողունների քանակը, որն ընդունվում է որպես սորտային խառնուրդ,

դ) հիմնական սորտի մորիկի տարբեր տեսակներով վարակված հասկերի քանակը,

ե) դժվար անջատվող մշակաբույսերի ցողունների քանակը, դժվար անջատվող մոլախոտի ցողունների քանակը, եղջերացավ հիվանդությամբ վարակվածության աստիճանը և բզեզի կերվածքը,

զ) չարորակ մոլախոտերի ցողունների քանակը,

է) թունավոր մոլախոտերի ցողունների քանակը,

ը) կարանտին մոլախոտերի ցողունների քանակը,

Նշված բոլոր ֆրակցիաների պարունակությունը խրձի մեջ արտահայտվում է հատերով և վերածվում է %-ների:

3. Ցորենի և գարու նախահիմնային և հիմնային ցանքերը պետք է ապահովեն 99.8%, I-ին վերարտադրության ցանքերը` 99.5%, II-ը 98.0% սորտային մաքրություն:

Վերը նշվածներից ցածր սորտային մաքրություն ապահովվող ցանքերը որպես սերմնադաշտ ենթակա են խոտանման:

4. Սորտային մաքրության %-ը որոշում են հիմնական սորտի հասկակիր ցողունների և ապրոբացվող մշակաբույսի բոլոր զարգացած ցողունների քանակների հարաբերակցությամբ:

Մորիկով վարակվածության աստիճանը (%) որոշվում է ըստ մորիկների տեսակների (փոշեմորիկ, քարամորիկ) և հաշվարկվում է վարակված ու առողջ ցողունների ընդհանուր քանակի հարաբերակցությամբ:

Սերմնադաշտերի դժվար անջատվող մշակաբույսերի և մոլախոտերի աղտոտվածությունը (%) որոշվում է դժվար անջատվող մշակաբույսերի, մոլախոտերի և

հիմնական մշակաբույսի հասկակիր ցողունների հարաբերակցությամբ: Այս դեպքում մրրիկով վարակված ցողունները չեն հաշվարկվում:

Խրձի անալիզի արդյունքների տվյալները մտցնում են ապրոբացիոն ակտի «Անալիզի արդյունքները» բաժին գրանցելով ակտում կարանտին մոլախոտերի քանակը և անվանումը:

5. Հացահատիկային սերմնադաշտերում դժվար անջատվող մշակաբույսերի թվին են պատկանում.

- ցորենի դաշտում - գարի, աշորա, հաճար
- գարու դաշտում - ցորեն, աշորա, հաճար
- գարնանացանի դաշտում - աշնանացան սորտերը
- աշնանացանի դաշտում - գարնանացան սորտերը

Երբ ընդհանուր աղտոտվածությունը բոլոր դժվար անջատվող մշակաբույսերով չի գերազանցում 5.0 %-ը, ապա ապրոբատորը տալիս է սերմարտադրողին ցուցմունք սերմերի ուշադիր (ջանադիր) գտման մասին:

Եթե ընդհանուր աղտոտվածությունը բոլոր դժվար անջատվող մշակաբույսերով գերազանցում է 5.0 %-ը, ապա ցանքը որպես սերմնադաշտ խոտանվում է:

6. Հացահատիկային սերմնադաշտում դժվար անջատվող մոլախոտերն են՝ ցորենի դաշտում - սոփորա (աղվեսագի), զիվան, դանաթափար (ակքանագոհներ), կոմեղինա (կոմեղինագոհներ), կապուտաչիկ, հնդկացորեն թաթարական, գարու դաշտում – խրփուկ սովորական, վարսակախոտ, զիվան, դանաթափար (ակքանագոհներ) սոփոր, սոփորա (աղվեսագի), կոմեղինա (կոմեղինագոհներ), կապուտաչիկ, վայրի բողկ:

Եթե սերմնադաշտի դժվար անջատվող մոլախոտերով աղտոտվածությունը գերազանցում է 3.0 %-ը, ապա ցանքը որպես սերմնադաշտ խոտանվում է:

7. Կարանտին, թունավոր և չարորակ, բայց հեշտ անջատվող մոլախոտերով աղտոտված սերմնադաշտերի սերմերը չեն խոտանվում, այլ պահեստավորվում են և գտվում են առանձին:

8. Վերը նշված մոլախոտերով աղտոտվածության աստիճանը որոշվում է ինչպես փորձանմուշների (խրձերի) անալիզներով, այնպես էլ աչքաչափով արմատի վրա ցանքսերի զննման եղանակով:

9. Խոտանման ենթակա են ցորենի և գարու այն սերմնադաշտերը (բացի նախահիմնային և հիմնային), որոնցում վարակվածությունը փոշենրրիկով (ցողուններով) կամ կարծր մրրիկով գերազանցում է համապատասխանաբար 2.0% և 5.0%:

Նախահիմնային և հիմնային սերմնադաշտերը չեն ճանաչվում այդպիսին, երբ փոշենրրիկով (ցողուններով) վարակվածությունը բարձր է 0.1%-ից կամ քարամրրիկով 0.05%-ից:

Ցորենի բոլոր վերարտադրության սերմնադաշտերը վարակված ցողունային մրրիկով, նախահիմնային ու հիմնային սերմնադաշտերը՝ գաճաճ մրրիկով և եղջերացավ հիվանդությանը ենթակա են խոտանման:

Յրահանգ

Եգիպտացորենի սերմնադաշտերի դաշտային հետազոտման (ապրոբացիա)

Եգիպտացորենի սերմնադաշտերի ապրոբացիան իրականացվում է մոմային կամ լրիվ հասունացման փուլում:

Սորտային նույնականության (տիպիկության) որոշման համար սերմնադաշտի անկյունագծերի ուղղությամբ վերցվում են նմուշներ, որոնց քանակությունը պետք է ունենա հետևյալ չափերը՝ մինչև 50 հա ցանքերից 250 կողր (10-ական կողր 25 փորձաբաժիններից): 50հա ավելի ցանքերի առկայության դեպքում 50 հա գերազանցող յուրաքանչյուր 5.0 հա-ից լրացուցիչ վերցվում են 25-ական կողրեր, որոնք վերցվում են արդեն առանձնացված 25 փորձաբաժիններից:

Նախահիմնային և հիմնային ինքնափոշոտվող գծերի և հիմնային վերարտադրության ցանքերում 2 տարբեր անկյունագծերով վերցվում և անալիզի են ենթարկվում երկու առանձին փորձանմուշներ և հաշվարկվում են անալիզի արդյունքների միջին թվաբանական ցուցանիշը:

Նախահիմնային, հիմնային, I-II վերարտադրության ստերիլ գծերի և սորտերի փորձանմուշները վերցվում են ինչպես ստերիլ գծերի շարքերից, այնպես էլ առանձնացմանը համապատասխան:

Նախահիմնային սերմնային փոքր ցանքերում փորձնական կողրեր չեն վերցվում, այլ ուսումնասիրվում են հենց բույսի վրա:

Սերմնադաշտերը այլ ցանքերից պետք է առանձնացված լինեն 200-300մ անջատիչ ցանքերով:

Անալիզի ենթարկվող կողրերը բաժանվում են երկու խմբի՝

ա) հիմնական տեսակի կողրեր- որոնք են ապրոբացվող սորտի, գծի, հիբրիդի, հիբրիդային պոպուլիացիայի ինչպես առողջ, այնպես էլ հիվանդ կողրերը,

բ) այլ տեսակների խառնուրդներ-առողջ և հիվանդ կողրերը:

Այս խմբին են պատկանում՝

- ըստ հատիկի կառուցվածքի, ձևի և գույնի հիմնական տեսակից տարբերվող կողրերը,

- կողրեր, որոնց հատիկի այլ գույնով գունավորությունը գերազանցում է 40%-ը (այս ցուցանիշը չի վերաբերվում տարբեր գունավորությամբ ծնողական ձևերի խաչաձևումից ստացված հիբրիդներին),

- շարքային և բարձր լիզինային ձևերի այն կողրերը, որոնց կառուցվածքի տարբերությունը բարձր է 40%-ից,

Ապրոբացիայի ենթարկվող սորտի հիմնական տեսակի կողրերի պատկանելիությունը որոշվում է ըստ հատիկի կառուցվածքի, ձևի և գույնի, կողրի միջուկի գույնի և ձևի, իսկ ինքնափոշոտվող ձևերի համար նաև ըստ կողրերի չափերի,

- հատիկի կառուցվածքը որոշվում է կողրերի միջին մասում,
- անալիզի արդյունքները գրանցվում են ապրոբացիոն մատյանում:

Անալիզների ընթացքում ապրոբատորի կողմից հաշվառվում է հիվանդ կողրերի ընդհանուր քանակը, ինչպես նաև հիվանդությունների տեսակները (ըստ քանակի), այդ թվում վարակվածությունը՝ փոշեմրիկով և բշտիկավոր մրիկով, ֆուզարիոզով, կարմիր և մոխրագույն փտախտով, դիպլոդիոզով և միգրոսպորոզով:

Ընդհանուր քանակի մեջ որոշվում է հիմնական տեսակի, այլ տեսակներով խառնուրդի և հիվանդություններով վարակված կողրերի պարունակությունը և արտահայտվում տոկոսներով:

Անալիզների միջոցով որոշվում է հիմնական տեսակի կողրերի քսենայնությունը (խաչածն փոշոտումից) առաջացած այլ գունավորությամբ հատիկների առկայությունը:

Այն որոշվում է բոլոր կողրերի վրա այլ գունավորությամբ հատիկների քանակով, ստացված թիվը բաժանվում է կողրերի ընդհանուր թվի վրա և արտահայտվում տոկոսներով:

Եթե ցանքերի տիպիկությունը նորմայից ցածր է, իսկ քսենայնությունը բարձր, այդ ցանքերը ենթակա են խոտանման: Այս նորմաները ներկայացվում են ստորև՝ աղյուսակի ձևով:

Եգիպտացորենի ցանքերի սորտային տիպիկության և քսենայնության սահմանված նորմաները.

N/N	Սերմերը	Դաշտային ապրոբացիա		Ամբարային ապրոբացիա	
		հիմնական տեսակի կողրերի քանակը % պակաս	քսենային հատիկների քանակը կողրի վրա ոչ ավելի	հիմնական	քսենային
1	2	3	4	5	6
1	Նախահիմնային սերմեր և ինքնափոշոտվող գծեր	99.5	20	100	0
2	Հիմնային սերմեր և ինքնափոշոտվող գծեր	99.5	20	100	10
3	Ինքնափոշոտվող գծերի I, II վերարտադրության և հիբրիդների հիբրիդացիոն տեղամասեր	98.0	50	99.0	30
4	Հասարակ հիբրիդներ (ծնողական ձևեր)՝ բազմացման տեղամասերում	98.0	400	99.0	200
5	Առաջին սերմնի միջգծային, եռագծային, միջսորտային հիբրիդներ	-	-	98.0	600
1	2	3	4	5	6
6	Սորտերի և հիբրիդային պոպուլյացիաների I և				

հետագա	99.0	100	10.0	10
վերարտադրություններ.	98.0	300	99.0	100
I կատեգորիա	97.0	600	99.0	200
II կատեգորիա				
III կատեգորիա				

Եթե տիպիկության որևէ ցանք մտնում է մեկ, իսկ ըստ քսենայնության՝ այլ սորտային մաքրության կատեգորիայի մեջ, այդ դեպքում վերցվում են ավելի ցածր կատեգորիաները:

Եթե հիբրիդիզացիոն տեղամասերում ծնողական ձևերից որևէ մեկը չի համապատասխանում սահմանված նորմաներին, ապա ամբողջ ցանքը խտանվում է:

Տեղական սորտերի ապրոբացիայի դեպքում տիպիկությունը և քսենայնությունը չի որոշվում: Այս դեպքում ապրոբացիոն ակտում նշվում է պոպուլյացիան կազմող տիպերի քանակը (%) և անվանումը:

Տեղական սորտերի ցանքերի հետազոտման ժամանակ ապրոբատորը նշում է տվյալ սորտի ամենատարածված անվանումը: Այս դեպքում, եթե ցանքում առկա են տվյալ տիպին պատկանող 85 %-ից ավելի կողեր, ապա ակտում նշվում է այդ տիպը (ատամնաձև, կարծր և այլն):

Վերարտադրությունը սահմանվում է ինքնափոշոտվող գծերի, սորտերի և հիբրիդային պոպուլյացիաների համար:

Սորտային տիպիկության կատեգորիան սահմանվում է սորտերի և հիբրիդային պոպուլյացիաների համար, իսկ ինքնափոշոտվող գծերի և հիբրիդների համար չի որոշվում:

Ամբարային ապրոբացիա

Ամբարային ապրոբացիայի են ենթարկվում նախահիմնային, հիմնային և I վերարտադրության ինքնափոշոտվող գծերի, սովորական և եռագիծ հիբրիդների I և II սերունդների նախահիմնային և հիմնային սորտերի ամբողջ բերքը, որն աճեցվել է գիտահետազոտական, ուսումնափորձական տնտեսություններում:

Եգիպտացորենի ամբարային ապրոբացիան իրականացվում սերմացու կողերի առանձնացումից և վերամշակումից հետո այն լրացնում է դաշտային ապրոբացիային:

Սերմացու կողերի վերամշակման ընթացքում հեռացվում են այլ տիպի, բարձր քսենայնություն ունեցող, լրիվ չհասունացած, հիվանդություններով և վնասատուներով վարակված բոլոր կողերը:

Ամբարային ապրոբացիայի են ենթարկվում պահեստավորված յուրաքանչյուր խմբաքանակից վերցված միջին փորձանմուշները: Միջին փորձանմուշները ձևավորելու համար ամբարներում և այլ տեղերում պահեստավորված խմբաքանակի տարբեր երեք շերտերից վերցվում են քառասունական կողեր: Մինչև 100g խմբաքանակից անալիզի համար վերցվում է մեծ փորձանմուշ՝ կազմված 200 կողից: 100g-ից գերազանցող յուրաքանչյուր 30g-ից լրացուցիչ վերցվում են տասական կողեր:

Վերցված փորձանմուշներում սորտային տիպիկությունը և քսենայնությունը որոշվում է նույն մեթոդով, ինչպես դաշտային ապրոբացիայի դեպքում:

Անալիզի ընթացքում նաև որոշվում է հիվանդություններով վարակվածությունը, հատիկներով ինչպես ամբողջ խմբաքանակում, այնպես էլ 100 կողրից բաղկացած փորձանմուշի մեջ:

Հատիկների քանակը, դիպլոդիոզով, կարմիր և մոխրագույն փտումով վարակվածությունը նախահիմնային և հիմնային, ինչպես նաև ինքնափոշոտվող գծերի նմուշներում 100 կողրի վրա չպետք է գերազանցի 300 հատիկի չափանիշը, իսկ I և հաջորդող վերարտադրության սորտերի ու հիբրիդների նմուշներում՝ 300 հատիկի չափաքանակը:

Ինչպես դաշտային, այնպես էլ ամբարային ապրոբացիայից հետո կազմվում են ակտեր (3 օրինակից) և ներկայացվում հավասատագրման մարմին: